

ԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՐՊՈՐ ԵՎ
ԴՐԱՆՑ ՈՃԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ
(2. Դիքենսի «Օլիվեր Թվիստ»-ում)

Իրակությունները, ինչպես հայտնի է, տեսական գրականության մեջ սովորաբար բնութագրվում են իբրև մշակութային կյանքի առարկայական արտահայտություններ: Ընդ որում, առկա են իրակությունների ընկալման երկու հայեցակերպեր՝ նեղ և լայն: Նեղ ընկալմամբ՝ իրակությունները բնորոշվում են իբրև բառային եզակի միավորներ, այնպիսիք, որոնք իրենց համարժեքները չունեն, ուստի բնորոշվում են որպես առանձին, «էկզոտիկ» շերտ՝ լեզվի բառապաշարի մեջ (Влахов С., Флорин С., 1986: 56):

Այդպիսի «էկզոտիկ» շերտի մեջ կարող են մտնել, օրինակ, անգլիական տոնածխական մշակույթի այնպիսի եզակի ուսեստեղներ, ինչպիսիք են աուդինգը (pudding) կամ simnel cake կոչվող կեքսը, որը, ավանդույթի համաձայն, մատուցվում է Mothering Sunday անվանվող կիրակի օրերին: Լայն ընկալումով՝ իրակություններ են համարվում ոչ միայն այսօրինակ եզակի կամ «էկզոտիկ» առարկաները, այլև ազգային կենցաղի ու բարքերի առանձնահատկությունները և նույնիսկ տվյալ երկրի հասարակական-մշակութային կյանքին բնորոշ երևույթները, պատմա-աշխարհագրական տվյալները, ստեղծված հանրահայտ կամ եզակիությամբ բնորոշվող գրական կերպարները: Լեզվա-երկրագիտական բառարաններում տրված շատ բառեր առնչվում են պետության կառուցվածքի, կրթության, սպորտի ազգային ձևերի (Անգլիայում, օրինակ, կրիկետը -cricket), գյուղատնտեսական եզակի կուլտուրաների ստեղծման և այլնի հետ, - համարվում են իրակություններ, իսկ նշյալ բառարանները նախապես համարվել են հենց նման բնութագրական իրակություններ ընդգրկող բառարաններ (Великобритания. Лингвострановедческий словарь, 1978: 3):


Սեծ Բրիտանիայի պատմալեզվա-մշակութային կյանքի բնութագրական կողմերն արտացոլող լեզվա-երկրագիտական բառարանների՝ բառապաշարի ընտրության հայեցակերպը լայն է, ընդգրկվող իրակությունները՝ բազմազան: Ըստ էության իրակությունների ընկալման այս հայեցակերպն է ճիշտ: Մեր խորին համոզմամբ՝ չի կարելի մի որևէ ազգային-ազգապատմա-լեզվամշակութային կյանքն արտացոլող իրականությունների բազմազանությունը նեղաց-

նել՝ դրանց միջից ընտրելով հատկապես “էկզոտիկ” բնույթ ունեցող իրականությունները: Դա նշանակում է փոքրացնել ոչ միայն տվյալ ժողովրդի ազգապատմա-լեզվամշակութային կյանքի լեզվական արտահայտությունների՝ իրականությունների քանակն ու բազմակերպությունը, այլև, դրանով իսկ, փոքր քցնել այդ համազգային կյանքի ու համաժողովրդական գործունեության լայնածավալ դաշտը: Բացի դրանից, մի որևէ երկրի կամ ժողովրդի կյանքի յուրահատկությունները և, այսպես ասած, առարկայական մշակույթի “եզակիությունները” դրսևորվում են ոչ միայն իրերի ու առարկաների, այլև սոցիալական որոշակի խմբերի, կենսագործունեության որոշակի ձևերի տեսքով: Դա նշանակում է, որ չպետք է միմյանցից անջատել կոնկրետ պատմական ժամանակը և ժամանակի առարկայական այս կամ այն դրսևորումը, սոցիալական կյանքը և դրա արգասիքը, գործունեության ձևը և դրա առարկան: Եթե շոշափելի, հասկանալի օրինակներ բերենք, ապա շատ տեղին է հիշել հայկական գյուղատնտեսական մշակույթից մաճկալի և մաճի օրինակը: Արորի կամ գութանի մաճը իրականություն է, բայց անձնավոր իրականություն է (առարկայական մշակույթի դրսևորում) նաև մաճկալը, և առանց մաճկալի անհիմաստ է դառնում մաճի բնութագրումը, քանի որ մաճկալի գործունեությամբ է մաճը՝ մաճ: Կարելի է բերել նաև այլ օրինակներ թե՛ հայկական, թե՛ բրիտանական անցյալից ու ներկայից, բայց բերված օրինակն էլ բավական է ցույց տալու, որ իրականությունների ընկալման լայն հայեցակերպը առավել ճշմարտացի է, քանի որ համապատասխանում է իրականությանը, նաև առավել արդյունավետ է՝ նույն այդ իրականությունը համակողմանիորեն բնութագրելու առումով:

Կենցաղագրական բնույթի գեղարվեստական գրականությունը, անդրադարձնելով իրականությունները, պատկերավոր ասած՝ անդրադարձնում է թե՛ մաճը, թե՛ մաճնաւին: Ասվածը մասնավորացնելով Զ. Դիքենսի ստեղծագործությունների վրա («Պիկկիկյան ակումբի հետմահիվան հուշերը», «Օլիվեր Թվիստի արկածները», «Նիկոլայ Նիկոլևիչի կյանքը և արկածները», «Ծննդյան պատմվածքներ», «Դոմբին և որդին» և այլն)՝ կարող ենք ասել, որ դրանցում առկա են բազմապիսի իրականություններ՝ վերցրած լայն առումով: Իհարկե, ինքը՝ հեղինակը, երբևէ տեսական քննարկման առարկա չի դարձրել իրականությունները, բայց դրանք գեղարվեստորեն անդրադարձրել է իր գործերում՝ բնութագրելու համար իր ժամանակը, հասարակական կյանքն ու բարքերը: Ազգային կենցաղի վառ դրսևորումները՝ իրականությունները, նրա պատումում ստանում են գեղագիտական-ոճական ուրույն արժեք ու նշանակություն: Դրանով իսկ հավաստվում է, որ գեղարվեստական լեզվում ամեն ինչ ենթարկվում է փոխա-

կերպման (տրասֆորմացիայի). այդ թվում՝ նաև իրակությունները և գործառական ոճերը, որոնք դիքենսյան տեքստերում ձեռք են բերում այլ որակներ, այսինքն՝ ոճավորվում են ըստ դիքենսյան ոճի և համախա հագեցնում նորանոր առնչանակություններով: Ս. Ք. Գասպարյանը, և մյուս համահեղինակները, խոսելով գործառական ոճերի մասին, մասնավորապես նշում են. «Անգլիացի լեզվաբանների մեկնաբանությամբ «ոճ» հասկացությունը մտազուգորդվում է գեղարվեստական տեքստերի հետ, մինչդեռ հաղորդակցման մյուս ոլորտների համար նրանք առաջադրում են «ռեգիստր» (register) եզրաբանական միավորը՝ առանձնացնելով գիտական դասախոսությունների, պատմա-իրավաբանական փաստաթղթերի, օրագրերի, ուղեգրառումների, եղանակի տեսության և շատ այլ ռեսիստրներ, որոնք հիմնականում համընկնում են այլ լեզվաբանական դպրոցների կողմից ընդունված ոճերի և ենթաոճերի հետ: Դեյվիդ Քրիստլը ռեգիստր է համարում սոցիալական իրավիճակի վրա հիմնված լեզվի տարբեր դրսևորումները...» (Գասպարյան Ս., Մուրադյան Գ., Գասպարյան Ն., 2011: 11): Այդօրինակ՝ գործառական ոճերը կամ «ռեգիստրները», որոնցում շատ են իրակությունները, գեղարվեստական տեքստում (օրինակ, 2. Դիքենսի «Օլիվեր Թվիստի արկածները» վեպում), պահպանելով հանդերձ իրենց նախնական ոճական բնութագիրը (կամ դրա հիշողությունը)՝ կապված գործառական տվյալ ոճի և նրա ունեցած սոցիալական մի որոշակի համատեքստի հետ, այնուամենայնիվ, ենթարկվելով գրողի գաղափարագեղագիտական մտայնությանը, «մուտք են գործում» հեղինակային ոճի մեջ՝ դառնում նրա լեզվի ու ոճի բաղկացուցիչ տարրերից մեկը:

2. Դիքենսի "Օլիվերում" շատ են տվյալ ժամանակին բնորոշ սոցիալական կյանքի արտահայտությունները և իրակությունները (աղքատաճող, ծխական բժիշկ, ծուխ, խաշիլ, ամուսնական մատանի, ծխական որբ, ծխական հանձնաժողով, բիզլը, ջենտլմեն, եռանկյուն, գլխարկ և այլն), որոնք, եթե վերցնենք լայն առունով, թերևս կարելի է համարել «սոցիալական իրակություններ»: Վեպում շատ են նաև գործառական տարբեր ոճերի (դիմում, քարոզ, հռետորաբանություն, պաշտոնական գրագրություն, գիտական շարադրանք, վարչարարություն, իրավաբանություն, քաղաքականություն և այլն) կիրառումները հատկապես գործող անձանց, սոցիալական տարբեր խավերի ներկայացուցիչների կողմից: Նման խոսույթներում, բնականաբար ի հայտ են գալիս, ինչպես և ասվեց, տարբեր բնագավառների բերաբերող իրակություններ, որոնց մի մասը զուտ ազգային (անգլիական և համաբրիտանական), «էկզոտիկ» իրակություններ են, իսկ մյուս մասը ընդհանրույթներ են, որոնց տիպական նմանակը



կարելի է ցույց տալ նաև մյուս ազգերի ծանաձակությունը: Նման ընդհանրությունների առկայությունը ակնառու է տարալեզու դարձվածքային միավորներում, որոնցում հաճախ «գործում են» («աշխատում են») միևնույն իրակությունները: Դարձվածաբանները նշում են, որ դա պայմանավորված է տարբեր լեզվամշակույթներում առկա ընդհանրություններով. «...նմանատիպ համեմատական ԴՄ-ների [դարձվածքային միավորների] առկայությունը հանգեցնում է այն մտքին, որ գոյություն ունեն համեմատական ընդհանրություն, որոնց տիպաբանական նմանությունը հիմնված է տարբեր ազգերի լեզվամտածողության տրամաբանական և պատկերավոր-գուգորդային ընկալման ընդհանրության վրա, որը կանխորոշվում է տարբեր իրակությունների կայունությամբ, ինչպես նաև մարդկային հանրույթի համընդհանուր փորձով և գիտելիքներով» (Եղիազարյան Գ. Վ., 2005: 161):

Այդ ամենը՝ թե առանձին կիրառվող իրակությունները (= դրանց անվանումները), թե՞ գործառական ոճերում ու դարձվածքային միավորներում գործածված «էկզոտիկ» ու «կայուն» իրակությունները, դիքենսյան տեքստում օժտվում են ոճական մի նոր յուրահատկությամբ՝ արտահայտելով հեղինակի «ծայնը». նրա աշխարհայացքը, հումորով ու գթասրտությամբ թաթալուն նրա հոգեվիճակը: Հատկանշական է որ դիքենսյան տեքստում հերոսների կողմից հնչեցված դարձվածքները, գործառական ոճերի կիրառումներն ու իրակությունների «ոգեկոչումները» հնչում են մեղմաթախիծ հումորով, հավաստելով արդի շրջանում ակտուալ դարձած այն տեսակետը «...թեև գործառական յուրաքանչյուր ոճ ենթադրում է լեզվական տարրերի ընտրության ու համակեցման ուրույն սկզբունք. որն օժտում է ոճը յուրօրինակությամբ և սահմանազատում այն մյուս ոճերից, այդուհանդերձ այն չի կարող ընդունվել որպես փակ համակարգ... Լեզուն իրական խոսքադրստեղծման պրոցեսում լայն հնարավորություն է տալիս ըստ ինքնության բոլոր գործառական ոճերի փոխներթափանցման համար» (Գասպարյան Ս., Մուրադյան Գ., Գասպարյան Ն., 2011: 14):

Վերոհիշյալ մյտերերը՝ կապված իրակությունների ընկալման հայեցակերպի, դրանց ոճական դրսևորումների հետ. լավագույն կերպով են հավաստում դիքենսյան կենցաղագրական տեքստերից («Օլիվեր Թվիստից») բերվող հետևյալ բնագրային ու թարգմանական օրինակները.

The surgeon leaned over the body, and raised the left hand. "The old story," he said, shaking his head: "no wedding-ring, I see. Ah! Good night." (Chapter I, p. 29)

Վիրաբույժը կռացավ դիակի վրա և վերցրեց ծախ ծեղրը:

-ևույն հին պատմությունը, - ասաց նա՝ գլուխը թափահարելով, - ամուսնական մատանի չունի: Օ՛, բարի գիշեր: (գլուխ I, էջ 5)

Խոսքը ծխական աղբատանցում մահացած աղջնակի մասին է: Այստեղ ուշագրավ է նաև այն, որ «ամուսնական մատանին»բոլոր ազգերի մոտ հանդիպող իրակություն է, ընդհանրույթ. թեև այն կարող է ունենալ նաև իր ինչ-ինչ տարբերակիչ կողմերը: Երկրորդ, ուշագրավ է «ամուսնական մատանի» հասկացության հագեցումը ողբերգականությամբ, քանի որ վիրաբույժն այն փնտրում է մահացած աղջնակի ձեռքին, ինչը և բնութագրում է «աղբատախնամ» իրականության դաժան դեմքը:

Այդպիսի մի բացահայտիչ նշանակություն է ձեռք բերում նաև այնպիսի մի իրակություն, ինչպիսին է աղբատանցի «խաշիլը».

"Come," said Mr. Bample somewhat less pompously, for it was gratifying to his feelings to observe the effect his eloquence had produced: "Come, Oliver! Wipe your eyes with the cuffs of your jacket, and don't cry into your gruel; that's a very foolish action, Oliver." It certainly was, for there was quite enough water in it already.

(Chapter III, p. 49)

- Բավական է,- ասաց միստր Բամփլը, գոհունակությամբ նկատելով իր պերճախոսության թողած ազդեցությունը երեխայի վրա, - բավական է, Օլիվեր, բաճկոնիդ թևի ծայրով աչքերդ սրբիր և խաշիլիդ մեջ արցունք մի թափիր, դա շատ հիմար արանք է, Օլիվեր:

- Սնշուշտ հիմար արարք էր, քանի որ առանց այդ էլ բավականին շատ ջուր կար այդ խաշիլի մեջ: (գլուխ III, էջ 23)

Այստեղ հույժ ողբերգական է խաշիլը. քանի որ խեղճ որբուկի՝ Օլիվերի արցունքները թափվում են նրա մեջ: Այս պատկերը կարելի է անվանել «ողբերգական զավեշտ», եթե նկատի ունենանք միստր Բամփլի հիմարավուն մտահոգությունը՝ «խաշիլիդ մեջ արցունք մի թափիր»: Որբի արցունքներով էլ ավելի ջրիկացող այս խաշիլի պատկերը, հարկավ գեղարվեստական ուժգին ներգործություն ունի. ահա թե ինչպես է իրակություն հանդիսացող այդ սովորական ճաշատեսակը՝ խաշիլը, ձեռք բերում անսովոր ներգործուն ուժ:

Դիքենսյան տեքստում ամենահասարակ, ամենշան թվացող իրերն ու առարկաները՝ առօրյա կյանքի ու կենցաղի այդ մանրուքները վերածվում են գրեթե խորհրդալիցանի: Այդպիսի մի կենցաղային մանրուք է. դիցուք, քթախոտի տուփը՝ անգլիական կենցաղային մշակույթի այդ գրեթե աննկատելի իրակությունը, որը նկարագրվում է այնպես, որ ընթերցողը կարող է և՛ լաց

լինել, և՛ սարսափ ապրել, և՛ անզուսպ քրքբալ: Այդ քթախոտի տուփը հնարամտորեն է պատրաստված, իբրև դագաղի մանրակերտ:

"I have taken the measure of the two women, that died last night, Mr. Bample," said the undertaker.

"You'll make your fortune, Mr. Sowerberry," said the beadle, as he thrust his thumb and forefinger into the undertaker: which was an ingenious little model of a patent coffin. "I say you'll make your fortune, Mr. Sowerberry," repeated Mr. Bumble, tapping the undertaker on the shoulder, in a friendly manner, with his cane. (Chapter IV, p. 56)

- Երեկվա մահացած երկու կանանց չափսերը առել են միստր Բամփլը, - ասաց դագաղագործը:

- Մեծ հարստություն եք դիզելու, միստր Սովերբերի, - ասաց Բիդլը, բթմատն ու ցուցամատը խրելով դագաղագործի մատուցած քթախոտի տուփի մեջ, որը դագաղի հնարամտորեն պատրաստված մի մանրանկար էր: - Ասում են մեծ հարստություն եք դիզելու, միստր Սովերբերի, - կրկնեց միստր Բամփլը՝ ձեռքի եղեգնազավազանով ընկերավար խփելով դագաղագործի ուսին: (գլուխ IV, էջ 28)

Նշյալ տիպի գեղագիտական ու ճանաչողական մեծ արժեք ունեցող և գեղարվեստորեն ոճավորված իրակությունները բազմաթիվ են դիքենսյան տեքստում, որոնց վերհանումը, դասակարգումն ու բնութագրումը հետազոտման կարիք ունեն:

Ծանոթագրություն

1. Համատեքստ հասկացությամբ, ընդհանուր առմամբ, մատնանշվում է գրական երկի կամ նրա մասերի պատմաբանասիրական համատեքստը (Ахманова О. С., Гюббенет И. В., 1977: 49): Ուղղահայաց համատեքստի մեջ, ըստ հետազոտողների, համագործակցում են հորիզոնական համատեքստը (ասույթի տարրերի սինտագմատիկ տեղակայումը) և նախագիտելիքը (ռուս.՝ фоновое знание), որոնք օժանդակ դեր են կատարում ուղղահայաց համատեքստի նկարագրման կամ մեկնաբանության համար: Գլոբալ ուղղահայաց համատեքստ ասելով սովորաբար նկատի են առնվում ստեղծման ժամանակը, գաղափարական նախադրյալները, հասկացության սահմանումները, նախագիտելիքը: Դրանց միասնության շնորհիվ հնարավոր է բացատրել երկի մտահղացման շարժատիպն ու պատկերային համակարգը՝ բնության և հասարակության գեղարվեստական արտացոլումը (Катинине И. Ф., 1983:16):

Գրականության ցանկ

- 1 Գասպարյան Ս., Մուրադյան Գ., Գասպարյան Ն., Գործառական ոճագիտություն, Ե., ԵՊՀ հրատ., 2011.
- 2 Եղիազարյան Գ. Վ., Մարմի մասերի անվանումներով կազմված դարձվածքները հայերնում և անգլերենում, ք. գ. ք. ատենախոսություն, Ե., 2005.
- 3 Լուսնաչարսկի Ա., Առաջաբան // Դիկենս Չ. Պիկվիկյան ակումբի հետմահվան հուշերը, Դ. 1, Ե., 1948, էջ 5-16:
- 4 Влахов С., Флорин С., Непереводимое в переводе, М., 1986.
- 5 Карасик В. И., О категориях лингвокультурологии. языковая личность: проблемы коммуникативной деятельности, Волгоград, 2001
- 6 Катинене Н. Ф., Глобальный вертикальный контекст романов Т. Гарди. Автореф. канд. фил. наук, М., 1983.
- 7 Ахманова О. С., Гюббенет И. В., Вертикальный контекст как филологическая проблема // ВЯ, # 3, 1977.
- 8 Великобритания. Лингвострановедческий словарь, М., 1978.
- 9 Dickens Ch., The adventures of Oliver Twist, М., 1955.
- 10 Դիկենս, Չ., Օլիվեր Թվիստի արկածները, Ե., 1958.

The way to perceive realia and their stylistic manifestation in Oliver Twist by Ch. Dickens

Realia are known as material expressions of cultural life of the society.

Realia are perceived in two ways- narrow and wide. According to narrow perception realia are defined as single units having no equivalents, that is why they are considered an "exotic" layer in the vocabulary of a language. Here belong the British ceremonial dishes like pudding or simnel cake. Wide perception of realia includes the peculiarities of the national everyday life and customs, even typical phenomena of social-cultural life of the given country. In Oliver Twist by Dickens the realia expressing the social life of the given period are abundant. In various contexts words connected with realia acquire new connotations both on the semantic and metasemiotic levels. Comparative analysis of the translation reveals generalities and differences in English and Armenian.